ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

Տավուշի մարզի Չորաթան համայնքի ղեկավարի 2011թ-ի 2-րդ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին հանրությանը ներկայացվող հաշվետվությունը

28.06.2011թ.

(Զեկուցող համայնքի ղեկավար Վ. Բաղմանյան)

Համայնքի ղեկավար Վ. Բաղմանյանը ներկայացրեց 2-րդ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքները:
Նա նշեց,որ այս ժամանակահատվածում կատարվել է ևս մեկ ծրագրի՝ խմելու 2-րդ ջրագծի աշխատանքներ, Հին Չորաթան հանդամասից,որը լրացուցիչ կապահովի ներքին թաղամասի տնտեսություններին խմելու ջրով:
Ներքին թաղամասում կատարվել է 1կմ ոռոգման ջրատարի վերանորոգում:
Կատարվել է ջրամբարների և սելավատարների մաքրում:
Կազմակերպվել է գյուղի սանիտարական մաքրում,աղբահանում և գերեզմանոցների մաքրում:
Աջակցել է գարնանային զորակոչին և ուսումնավարժական հավաքներին:
Կազմակերպել է գյուղացիական տնտեսությունների գարնանացան ցանքսերի աշխատանքներին:
Գյուղում ոռոգման ջրի բացակայության հետևանքով հողերի բերքատվությունը շատ ցածր է , որն էլ իր հերթին անդրադառնում է հարկերի և վարձավճարների ժամանակին հավաքագրման վրա :
Ցածր մակարդակի վրա է հարկերի և վարձավճարների հավաքագրման աշխատանքները:Բյուջեի սեփական եկամուտները այս եռամսյակում կատարվել է 34 տոկոսով:

ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԲԱՂՄԱՆՅԱՆ